https://doi.org/10.46991/S&L/2020.87.071

ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Էմիլյա Աբրահամյան
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
ՀՈՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ

1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո Հայաստանի Հանրապետությունում դատահիրավական բարեփոխումների արդյունքում մշակված կարևոր իրավական ակտերից է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2003 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրքը, որը կոչված է միասնական, համակարգված և համապարփակ կերպով կարգավորելու քրեաիրավական հարաբերությունները: Օրենսգիրքը սկզբնական շրջանում կատարեց իր առաքելությունը՝ հանրապետությունում գործընթացների ժամանակ ծագած հանցավոր վարքագծի նոր ձևերի դեմ պայքարի գործում դառնալով հարաբերականորեն արդյունավետ միջոց:

Բարձր գնահատելով ՀՀ գործող քրեական օրենսգրքի, հատկապես պատժի ինստիտուտի ակնհայտ առավելություններն ու դրական նշանակությունը հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի գործում՝ պետք է նշել, որ այն զերծ չէր նաև թերություններից: Օրենսգրքի կիրառման ավելի քան տասնհինգ տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ հաշվի առնելով՝ օրենսգրքում ավելի քան հարյուր փոփոխություն ու լրացում է կատարվել: Ընդ որում, այս գործընթացը դեռ շարունակվում է: Ընդունելով դրանց մեծ մասի ողջամիտ և առաջադիմական բնույթը՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ կան նաև նորմեր, որոնք հակասում են քրեական իրավունքի տեսության ժամանակակից միտումներին:

Անդրադառնալով պատժի նշանակման ինստիտուտի վերաբերյալ օրենսգրքում առկա հիմնախնդիրներին ու թերություններին՝ մեր ուշադրությունն ենք կենտրոնացրել մի կարևոր հանգամանքի վրա, այն է՝ թե ինչպիսին պետք է լինի պատժի ինստիտուտն առաջիկա տարիներին, ինչ ուղենիշեր են պետք դրա արդյունավետությունը բարձրացնելու, կատարվող հանցավոր արարքների հեղինակների նկատմամբ համաչափ և արդարացի պատժատեսակ ու պատժաչափ սահմանելու և հանցագործությունները կանխարգելելու մասին օրինական պահանջները կյանքի կոչելու համար:

Այսպես, ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (…)»:

Այս հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու պատժի նշանակման հետևյալ ընդհանուր սկզբունքային պահանջները.

ա) պատժի նշանակում հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների հաշվառմամբ,

բ) կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատում,

գ) հանցավորի անձը բնութագրող տվյալների հաշվառում,

դ) պատասխանատվությունն և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների գնահատում:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 70-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ: (…)»[1]:

Այն համոզմանն ենք, որ ի տարբերություն ՀՀ գործող քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասով առավել հստակեցվել են դատարանի կողմից պատիժ նշանակելու ընթացքում պատժատեսակը և պատժաչափը որոշելիս հաշվի առնվող հանգամանքները: Սակայն, միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ նպատակահարմար կլիներ Նախագծով առաջարկվող տարբերակում կատարել հետևյալ փոփոխությունները:

Մասնավորապես, Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասով որպես պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջ այլևս նշված չէ **անձը բնութագրող տվյալների գնահատումը**[2]:

Հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը մշտապես դիտվել է որպես քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք: Այս հիմնախնդրի բարդությունը բացատրվում է նրանով, որ օրենքը որպես հաշվառման ենթակա չափանիշ մատնանշում է միայն մեղավորի անձը, սակայն յուրաքանչյուր անձ բնութագրվում է բազմաթիվ անհատական հատկանիշներով, որոնց թվում են անձնական որակական հատկանիշները, բնավորության առանձնահատկությունները, խառնվածքը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են բազմաթիվ դիրքորոշումներ այն մասին, թե այդ հատկանիշներից որոնք են ենթակա հաշվառման: Ըստ այդմ, անձը բնութագրող հատկանիշները կարելի է բաժանել երկու խմբի՝ հաշվի առնելով այդ հատկանիշների մեկնաբանման նեղ և լայն իմաստները: Առաջին դիրքորոշման կողմնակիցները կարծում են, որ պատիժ նշանակելիս անհրաժեշտ է հաշվի առնել միայն այն հանգամանքները, որոնք անմիջականորեն կապված են կատարված հանցագործության հետ[3], երկրորդ դիրքորոշման կողմնակից-

---

[1] Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ, էլեկտրոնային ռեսուրս՝ https://www.e-draft.am/projects/2115/about (վերջին մուտք՝ 15.03.2020 թվական):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս ***Арямов А.А.*** Общетеоретические основы учения об уголовном наказании, Дисс. … д.ю.н. СПб., 2004, էջ 175: ***Мельникова Ю.Б.*** Личность преступника и индивидуализация уголовного наказания, «Советское государство и право», 1972, № 8, էջ 108: ***Чечель Г.И.*** Личность преступника как фактор, влияющий на назначение наказания, СПС «Консультант Плюс», 2012, № 5:

ները, ընդհակառակը, գտնում են, որ մեղավորի անձը բնութագրող բոլոր հանգամանքները հաշվի առնելու անհրաժեշտությունն առավել հիմնավոր է[1]:

Նախապատվությունը տալով մեղավորի անձի հաշվառման լայն իմաստով տարածական մեկնաբանությանը՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանքի վրա: Թվարկելով մեղավորին բնութագրող հանգամանքները, որոնց պետք է ուշադրություն դարձվի պատիժ նշանակելիս, գիտնականները հաճախ շրջանցում են դրանց հաշվառման մեխանիզմի հարցը, ինչն անթույլատրելի է, քանի որ նման հանգամանքների ցանկի անսահման «ուռճացումն» անիմաստ է՝ առանց դատարանի կողմից դրանց հաշվառման գործնական հնարավորության առկայությունը դիտարկելու:

Հետևաբար, անձը բնութագրող էական հանգամանքների ցանկի չափից ավել ընդլայնումը միշտ չէ, որ հիմնավորված է: Ձևավորելով այս ցանկը՝ անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել դրանում այս կամ այն տարրն ընդգրկելու նպատակահարմարությունը, առաջին հերթին՝ պատժի վրա ազդեցություն ունենալու հնարավորության և երկրորդ՝ դատարանի կողմից դրանց փաստացի գնահատական տալու հնարավորության առկայության տեսանկյունից:

Քննարկվող հարցի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով ձևավորված իրավական դիրքորոշումներին: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցավորի անձը, նրա՝ սոցիալապես էական նշանակություն ունեցող հատկանիշները բացահայտվում են վերջինիս վարքի, հասարակության մեջ նրա իրականացրած գործունեության միջոցով: Հետևաբար, պատասխանատվության անհատականացման համար անհրաժեշտ է իմանալ ոչ միայն այն պայմանները, որոնցում ձևավորվել է հանցավորի անձը, այլև նրա սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերը, որոնք իրենց արտացոլումն են գտել արարքի, մասնավորապես հանցագործության կատարման մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր կայուն նախադեպային իրավունքի շրջանակներում մշտապես կարևորել է պատասխանատվության անհատականացման համար հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես նրա կենսաբանական և սոցիալական առանձնահատկությունները բացահայտելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու՝ դատարանի պարտականությունը: Այսպես՝ *Ն.Սարգսյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները[2]:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 3-րդ և 14-րդ հոդվածների պահանջները, զարգացրել է վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ փաստելով, որ պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրա-

---

[1] Տե՛ս ***Кругликов Л.Л.*** Уголовно-правовые средства обеспечения справедливости наказания. Ярославль, 1986, էջ 53: ***Лейкина Н.С.*** Личность преступника и уголовная ответственность, Л., Издательство ЛГУ, 1968, էջ 113: ***Непомнящая Т.В.*** Мера уголовного наказания: проблемы теории и практики, Дисс. … д.ю.н. Екатеринбург, 2010, էջեր 225-226:

[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը:

կան պահանջով: Հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող սահմանափակվել միայն անձի բարոյական հատկանիշներով և ներառում են նաև անձի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, նրա դրական կամ բացասական բնութագիրը, խրախուսանքների կամ տույժերի առկայությունը և այլն:

Հետագայում Վճռաբեկ դատարանը *Է.Ավետիսյանի* վերաբերյալ գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ին կայացված որոշմամբ ևս ընդգծել է դատարանների կողմից հանցավորի անձը բնութագրող տվյալները մանրակրկիտ վերլուծելու և պատիժ նշանակելիս դրանք հաշվի առնելու անհրաժեշտությունը[1]: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը մշտապես կարևորել է հանցանք կատարած անձի կյանքի ու անձնական առանձնահատկությունները վեր հանելու (ընտանեկան դրություն, տարիք, առողջական վիճակ և այլն), ինչպես նաև նախկինում դրսևորած վարքագիծը բազմակողմանի գնահատման ենթարկելու կարևորությունը, որոնք կարող են վերջինիս բնութագրել ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պատիժ նշանակելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու կարևորության հարցին, արձանագրել է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցությունը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, սեռը, դատվածությունը և այլն): Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստել է հանցավորի ընտանեկան դրությունը, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատժի ազդեցությունը, նրա խնամքին այլ անձանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղն ու դիրքը, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագիրը և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը[2]:

Այսպիսով, անհրաժեշտ է հստակեցնել և օրենսդրորեն ամրագրել դատարանի կողմից պատիժ նշանակելիս գնահատման ենթակա անձը բնութագրող հանգամանքների հստակ ցանկ: Որպես հանցավորի **անձը բնութագրող հատկանիշներ պետք է գնահատվեն նրա կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առաջ, ինչպես նաև նրա կենսակերպը մինչև հանցագործության կատարումը և վարքագիծը՝ այն կատարելուց հետո:** Այդ տվյալները դատարանին հնարավորություն են տալիս անձին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձ՝ իր անհատական հատկանիշներով հանդերձ: Բացի այդ, պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որ-

---

[1] Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Աբրահամ Միքայելյանի վերաբերյալ գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԷԴ/0079/01/16 և Խաչատուր Բեգլարյանի վերաբերյալ գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԷԴ/0010/01/17 որոշումները:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հազարապետ Հարությունյանի վերաբերյալ գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Նարեկ Սարգսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Սերոբ Սարգսյանի վերաբերյալ գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12, Սեյրան Աղախանյանի վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12, Ձոն Շիրվանյանի վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0091/01/14, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Էդիկ Ավետիսյանի վերաբերյալ գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ/0058/01/17 և այլ որոշումները:

պեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին: Հանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս վերջինիս անձը բնութագրող հատկանիշների հաշվառմանը վերաբերող հարցի կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այն իր բացառիկ գործնական նշանակության ուժով մշտապես արդիական է եղել քրեական իրավունքի տեսության մեջ:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է (3-րդ հոդված), ուստի այն համոզմանն ենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքն ընդհանրապես և պատժի ինստիտուտը մասնավորապես պետք է հիմնվեն ոչ միայն *«արարքի հայեցակարգի»,* այլև ***«անձի հայեցակարգի»*** վրա, քանի որ օրենքը պատժում է ոչ թե հանցագործությունը, այլ հանցանք կատարած կոնկրետ անձին: Հանցագործության այս կամ այն տեսակի համար պատիժ նախատեսելիս օրենսդիրը պետք է հիմնվի նաև կրիմինալոգիական իրողության վրա, որի կարևոր տարրերից մեկը հանցանք կատարողի անձն է: Արտասահմանյան բազմաթիվ երկրների քրեական օրենսդրությունները հիմնված են «անձի հայեցակարգի» վրա, համաձայն որի՝ պատժվում է հանցանք կատարած անձը: Օրենսգիրքը, հիմնվելով արարքի հայեցակարգի վրա, շատ դեպքերում թույլ չի տալիս ոչ միայն ապահովել արդարության սկզբունքի իրագործումը, այլև արդյունավետ քրեական քաղաքականություն իրականացնել:

Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 70-րդ հոդվածում կատարել փոփոխություն և որպես արդարացի պատիժ նշանակելու կարևորագույն երաշխիք սահմանել նաև հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել և օրենսդրորեն ամրագրել դատարանի կողմից պատիժ նշանակելիս գնահատման ենթակա անձը բնութագրող հանգամանքների հստակ ցանկը:

Վերոգրյալից զատ՝ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ որպես պատժի տեսակը և չափը որոշող հանգամանք Նախագծով սահմանվել են ***հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը:*** Ներքոշարադրյալ հիմնավորումներով առաջարկում ենք պատիժ սահմանելիս որպես գնահատման ենթակա հանգամանք նախատեսել նաև ***խախտված հասարակական հարաբերության բնույթը:***

Այսպես, քրեական իրավունքի խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանցագործության օբյեկտ կարող են հանդիսանալ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, իրավաբանական անձանց իրավունքների, սեփականության, շրջակա միջավայրի, հասարակական կարգի և անվտանգության, սահմանադրական կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության ապահովմանը և պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հասարակական հարաբերությունը կարող է վնասվել նրա տարրերից որևէ մեկի վրա ներգործելով, այն ոչնչացնելով կամ վնասելով: Հասարակական հարաբերության այն տարրը, որի վրա ներգործելով, որը ոչնչացնելով կամ վնասելով խախտվում, վնասվում է հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունը, հանցագործության առարկան է:

Հանցագործության օբյեկտը և հանցագործության առարկան պետք է հստակ սահմանազատվեն միմյանցից: Հանցագործության առարկան հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության տարրն է, նրա բաղկացուցիչ մասը, իսկ մասը չի կարող նույնացվել ամբողջի հետ: Մարդիկ, նյութական և ոչ նյութական արժեքները ոչ թե հանցագործության օբյեկտներ են, այլ առարկաներ:

Բացի այդ, թեև հասարակական հարաբերությունը միշտ էլ վնասվում է դրա տարրերից որևէ մեկի վրա ներգործելու, այն ոչնչացնելու կամ վնասելու դեպքում, այնուամենայնիվ հանցագործության առարկան կարող է և իրական վնաս չկրել: Բերենք մեկ օրինակ սեփականության դեմ ուղղված հանցագործություններից: Այսպես, գողության դեպքում, որի օբյեկտը սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, **հանցագործության առարկան՝ նյութական իրը կամ արժեքը, որը հափշտակվում է, իրական վնաս չի կրում:** Մինչդեռ **սեփականության հարաբերություններն այդ դեպքում խախտվում և վնասվում են**: Նշանակում է, ի տարբերություն հանցագործության առարկայի, հանցագործության օբյեկտը միշտ էլ վնասվում է[1]: Ուստի պատիժ նշանակելիս սահմանափակվել միայն պատճառված վնասի գնահատմամբ՝ հաշվի չառնելով խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կարծում ենք՝ արդարացված և ընդունելի չէ:

Բերենք մեկ այլ օրինակ զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություններից: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսվում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի համար ստորադասի կամ նրա մերձավորի նկատմամբ:

Վերոնշյալ հանցագործության կատարմամբ խախտվում են **զինվորական ծառայության պաշտպաննությանն ուղղված հասարակական հարաբերությունները,** և կատարված արարքը խախտում է զինվորական կանոնագրքերով սահմանված ենթակայության կարգը, վկայում զինվորական ծառայության նկատմամբ հանցանք կատարած անձի անբարեխիղճ վերաբերմունքի մասին, ինչն էլ իր հերթին բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության ու ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա:

Իսկ ինչ վերաբերում է **հանցագործությամբ պատճառված վնասին, ապա որպես այդպիսին կարող են դրսևորվել կատարված արարքի արդյունքում տուժողի առողջությանը ծանր վնաս հասցնելը, տուժողին անզգուշությամբ մահ պատճառելը, մարտական առաջադրանքի խափանումը** և այլն: Հետևաբար, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը և խախտված հասարակական հարաբերությունները պետք է հստակ սահմանազատվեն:

Քննարկվող հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում մեջբերել նաև մեկ օրինակ դատական պրակտիկայից: Այսպես, Վճռաբեկ դատարանը *Կ.Բալայանի* վերաբերյալ գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է, որ ստորադաս դատարանները վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելիս պատշաճ գնահատման չեն արժանացրել նրա կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝

«ա) հանցագործության եղանակը և իրադրությունը, այն է՝ այլ զինծառայողների ներկայությամբ տուժող Հ.Գրիգորյանի նկատմամբ պարբերաբար բռնություն գործադրելը (...),

*բ) **պատճառված վնասի բնույթը,** այն է՝ ամբաստանյալի գործողությունների արդյունքում անզգուշությամբ առաջացել են ծանր հետևանքներ, մասնավորապես, տուժող Հ.Գրիգորյանն ինքնասպանությամբ՝ իրեն ամրակցված ինքնաձիգով բերանի շրջանում կրակոց արձակելով, վերջ է տվել իր կյանքին: Այլ կերպ՝ առկա է քննարկվող հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ առավել ծանրացնող հանգամանք հանդիսացող «ծանր հետևանքներից» ամենավտանգավորը՝ վրա է հասել մարդու մահ,*

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, *Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ.Խաչիկյան և ուրիշ., խմբ. Գ.Ղազինյանի* – Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 123:

գ) անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի նկատմամբ, մասնավորապես, թեև հանրորեն վտանգավոր հետևանքի նկատմամբ ամբաստանյալը դրսևորել է անզգուշություն, այնուամենայնիվ, բուն հանցավոր արարքը կատարել է ուղղակի դիտավորությամբ (...),

դ) հանցագործության շարժառիթը, ինչպես նաև ***խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը,*** *այն է՝ հանդիսանալով պետ՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող անձի նկատմամբ, ինչը վկայում է* ***հանցանք կատարած անձի կողմից զինվորական ծառայության նկատմամբ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին****, ընդ որում, հանցանքը կատարվել է իր գերակայությունը հաստատելու և ենթակաների շրջանում խստապահանջ պետի տպավորություն թողնելու շարժառիթով»*[1,2]*:*

Վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արդարացիորեն արձանագրել է, որ հանցագործության եղանակն ու իրադրությունը, շարժառիթը, պատճառված վնասը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը վկայում են կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, ինչը ստորադաս դատարանի կողմից պատիժ նշանակելու գործընթացում որևէ գնահատականի չի արժանացել:

Այսպիսով, դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջներից է նաև այն հանգամանքը, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին և բնույթին: Ուստի առանցքային խնդիր է այն, որ դատարանի կողմից պատիժ նշանակելիս պատշաճ իրավական գնահատման ենթարկվեն նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը և կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ կետում նշել ինչպես **հանցագործությամբ պատճառված վնասի բնույթը և չափը,** այնպես էլ **խախտված հասարակական հարաբերությունների բնույթի և կարևորության գնահատումը՝** որպես արդարացի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջներ:

Բացի այդ, կարծում ենք, որ որպես պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջ պետք է նախատեսել նաև ***տուժողի դիրքորոշման հաշվառումը:***

Դատարանի կողմից պատիժ նշանակելիս արդարությունը՝ որպես քրեական իրավունքի հիմնարար սկզբունք, դրսևորվում է ոչ միայն հանցանք կատարած անձի նկատմամբ, այլ նաև հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է: Սոցիալական արդարության վերականգնման պահանջը հասցեագրված է ինչպես պետությանը, այնպես էլ տուժողին, որը սոցիալական արդարության վերականգնման հարցում առավել շահագրգիռ կողմ է և իրավասու է պահանջել այդ նպատակի իրականացումը: Հետևաբար, արդարության՝ որպես պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է նաև տուժողի վերաբերմունքն ու դիրքորոշումը նշանակված պատժի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը *Ն.Սարգսյանի* վերաբերյալ գործով արձանագրել է, որ արդարության՝ որպես պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է դատապարտյալի, տուժողի և հասարակության վերաբերմունքը նշանակված պատժի նկատմամբ: Ուստի պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դատարանից պահանջում է ողջամտորեն հաշվի առնել արդարության մասին

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Բալայանի վերաբերյալ գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴ1/0001/01/17 որոշման 16-րդ և 17-ր կետերը:

[2] Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Սուքիասյանի գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ3/0299/01/15 որոշման 16-րդ և 17-րդ կետերը:

վերոնշյալ սուբյեկտների կարծիքը, առավել ևս, որ դրանք ձևավորվում են այն նույն հանգամանքների հիման վրա, որոնք դատարանը հաշվի է առնում պատիժ նշանակելիս (հանցագործության հանրորեն վտանգավորությունը, հանցավորի անձը և այլն)[1]:

Քննարկվող հարցի վերաբերյալ նշենք նաև, որ Եվրոպական միության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի Հրահանգի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«պատժի միակ նպատակը մեկուսացումը և հատուցումը է: Ռեստիտուցիան, վերականգնումը, վերադաստիարակումը, արդարության վերականգնումը կարևոր դեր են խաղում քրեական արդարադատության համակարգում և պետք է հաշվի առնվեն պատժատեսակի և պատժաչափի որոշման և կիրառման ժամանակ: Այնուամենայնիվ, տուժողները կարող են բացասաբար արձագանքել չափազանց մեղմ պատժին: Նրանք կարծում են, որ մեղադրյալի ապագայի նկատմամբ մտահոգություններն ավելի շատ են, քան կատարված հանցագործության համար համարժեք պատիժ նշանակելը:*

Այնուամենայնիվ, երբ տուժողը ներողամտություն է դրսևորում և խնդրում է մեղմ պատիժ նշանակել ամբաստանյալի նկատմամբ, դա կարող է հաշվի առնվել մեղմ պատիժ նշանակելիս, եթե այդ դիրքորոշումը տուժողի վրա հարկադրանքի կամ որևէ այլ ազդեցության հետևանք չէ»[2]:

Նշենք նաև, որ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նշված դրույթը իր արտացոլումն է գտել նաև Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում՝ տուժողի դիրքորոշման հաշվառման անհրաժեշտությունը նախատեսելով որպես պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջ[3]:

Այսպիսով, կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև տուժողի դիրքորոշման հաշվառումը ներառել արդարացի պատիժ նշանակելիս հաշվի առնվող հանգամանքների շարքում:

Ամփոփելով վերոշարադրյալ նկատառումները՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածի 2-րդ մասը (Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասը) շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Պատժի տեսակը և չափը որոշելիս դատարանը պետք է ելնի.

1) անձը բնութագրող տվյալներից (որպես անձը բնութագրող տվյալներ գնահատվում են՝ անձի կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև, ինչպես նաև նրա կենսակերպը մինչև հանցագործության կատարումը և վարքագիծը՝ այն կատարելուց հետո),

2) խախտված հասարակական հարաբերությունների բնույթից և կարևորությունից,

3) հանցագործությամբ պատճառված վնասի բնույթից և չափից,

4) հանցագործության եղանակից, տեղից, ժամանակից,

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը:

[2] Տե՛ս European Union Directive 2012/29/EU, Establishing minimum standards on the rights, support and protection of victims of crime, and replacing Council Framework Decision 2001/220/JHA, 25 October 2012, էլեկտրոնային ռեսուրս՝ https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2012:315:0057:0073:EN:PDF (վերջին մուտք՝ 15.03.2020 թվական):

[3] Տե՛ս Уголовный кодекс Республики Беларусь (09.07.1999), էլեկտրոնային ռեսուրս՝ http://www.pravo.by/document/?guid=3871&p0=Hk9900275 (վերջին մուտք՝ 15.03.2020 թվական):

5) հանցագործության շարժառիթներից և նպատակներից,

6) հանցագործության դիտավորության կամ անզգուշության տեսակից,

7) հանցավոր մտադրության իրականացման աստիճանից,

8) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներից,

9) տուժողի դիրքորոշումից,

10) հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա նշանակվող պատժի հնարավոր ազդեցությունից»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ունենալ ՀՀ Սահմանադրությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանող, հայեցակարգային հիմքերի վրա հիմնված, կրիմինալոգիական իրողությունն արտացոլող, ժամանակակից մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովող, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ քրեական նոր օրենսգիրք, որը թույլ կտա ապահովել անձի, հասարակության և պետության անվտանգությունը հանցավոր ոտնձգություններից, գտնում ենք, որ մեր կողմից ներկայացված առաջարկությունները կծառայեն ակնկալվող նպատակներին:

ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ ОБЩИХ НАЧАЛ НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

Эмиля Абраамян
Помощник Председателя Уголовной палаты
Кассационного суда РА, соискатель кафедры
уголовного права и уголовно-процессуального права
Института права и политики РАУ

Статья посвящена общим началам назначения наказания, в которых находят отражение и конкретизацию принципы уголовного права. В работе рассматриваются основные вопросы общих начал назначения наказания, ряд спорных вопросов в юридической литературе, проводится разграничение между критериями индивидуализации наказания.

В статье рассматриваются вопросы реализации требований общих начал назначения наказания, дается их краткая характеристика, обращается внимание на спорные формулировки, приводятся конкретные предложения по совершенствованию уголовного законодательства применительно к институту назначения наказания.

Автор приводит определения высказанные учеными, а также некоторые примеры из судебной практики Кассационного суда РА.

APPLICATION ISSUES OF GENERAL PRINCIPLES OF SENTENCING AND DEVELOPMENT PROSPECTS

Emilya Abrahamyan
Assistant to the Chairman of the Criminal chamber of the RA Cassation court, PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU Institute of Law and Politics

The article deals with the general principles of sentencing, which are reflected and specification of principles of criminal law. The paper examines the main issues of general principles of sentencing, a number of contentious issues in the legal literature, a distinction between the criteria of individualization of punishment.

The article deals with the implementation of the requirements of the general principles of destination, gives their short characteristic, draws attention to the controversial wording, suggests amendments of improving criminal legislation in relation to the institution of punishment.

The author represents definitions made by scientists, as well as legal positions and approaches of the Court of Cassation of RA.

Բանալի բառեր՝ պատժի նշանակում, պատժի անհատականացման չափանիշներ, հանցավորի անձը բնութագրող տվյալներ, հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը
Keywords: sentencing, criteria of individualization of punishment, personality of the guilty, degree and nature of public danger
Ключевые слова: назначение наказания, критерии индивидуализации наказания. личность виновного, степень и характер общественной опасности